<<ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>> ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07

ք. Երևան «18» հուլիսի 2017թ.

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ն, ի դեմս ռեկտոր Ա. Իսաբեկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՄարտՇին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2017թ. սեպտեմբերի 11-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9800 000 (տասնինը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 3300 000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է՝.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ

ք. Երևան, Իսահակյան 36

«Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ

ՀՀ 11815000774800

ՀՎՀՀ 01505555

Ռեկտոր՝

_____ Ա. Իսաբեկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄարտՇին» ՍՊԸ

ք. Երևան, Նորք 2-րդ նրբ.17

ՀՎՀՀ՝ 01534233

«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ Մաշտոց մ/ճ

Հ/Հ՝ 16043022733200

տնօրեն՝ Մ. Հարությունյան

_____

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 1
«18» հուլիսի 2017թ. կնքված
«ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07» *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[2]*

«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ.դրամ)
1	2	3	4	5	6
	1-1. 1-ին մասնաշենք				
	Մեկ հարկանի շինության քանդման աշխատանքներ				
1	Քարե բլոկներով պատի քանդում δ=0,2մ 18,3մ^2	մ^3	3,66	6,562	24,017
2	Բետոնե բլոկներով պատի քանդում δ=0,2մ 62,1մ^2	մ^3	12,42	6,562	81,500
3	Բետոնե բլոկներով միջնորմի քանդում δ=0,2մ 18,0մ^2	մ^3	3,6	6,562	23,623
4	Ծածկի փայտե գերանների քանդում, հանձնել տնօրինությանը	մ^3	1	20,513	20,513
5	Տանիքի փայտե գերանների քանդում, հանձնել տնօրինությանը	մ^3	5,3	20,513	108,719
6	Տանիքի փայտե կավարամածի քանդում , հանձնել տնօրինությանը	մ^2	94,2	0,366	34,477
7	Տանիքի ասբոշիֆերե ծածկույթի ապամոնտաժում	մ^2	112,2	0,164	18,401
8	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	մ^3	30	4,372	131,160
	1-ին մասնաշենք՝ 1-ին հարկ Քանդման աշխատանքներ				
1	Կախովի առաստաղի քանդում	մ^2	102,8	0,164	16,859
2	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	մ^3	1	4,372	4,372
	Վերանորոգման աշխատանքներ				
1	Գիպսակարտոնե կախովի առաստաղի հավաքում d=9մմ , հիմնակմաղքի պատրաստումով +3,2 նիշի վրա	մ^2	112,1	7,222	809,586
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	112,1	1,75	196,175

3	Պատերի մակերեսների հավաքում գիպսակարտոնով d=12,5մմ, հիմնակմաղքի պատրաստումով	մ^2	159,6	3,657	583,657
4	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	267,7	1,53	409,581
	Ընդամենը 1-1 մասի				
	1-2. 2-րդ մասնաշենք				
	2-րդ մասնաշենք՝ 1-ին հարկ Քանդման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Հախճասալերով հատակի քանդում	մ^2	4,11	0,357	1,467
2	Ցեմենտավազային շաղախից հատակի նախապատրաստական շերտի քանդում քանդում	մ^2	4,11	0,348	1,430
3	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	մ^3	0,5	4,372	2,186
	Վերանորոգման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	13,3	1,53	20,349
2	Պատերի սվաղում բարձրորակ ցեմենտավազային շաղախով h=1800մմ	մ^2	13,2	2,108	27,826
3	Պատերի երեսապատում հախճասալերով h=1800մմ ամրացված համապատասխան սոսնձով	մ^2	13,2	6,507	85,892
4	Պլաստիկե կախովի առաստաղի հավաքում	մ^2	4,11	2,704	11,113
	Հիմնական աստիճանավանդակ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	103,4	1,53	158,202
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	83,8	1,75	146,65
	2-րդ մասնաշենք՝ 2-րդ հարկ Քանդման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Հախճասալերով հատակի քանդում	մ^2	18,8	0,357	6,712
2	Ցեմենտավազային շաղախից հատակի նախապատրաստական շերտի քանդում	մ^2	18,8	0,348	6,542
3	Կախովի առաստաղի քանդում	մ^2	18,8	0,164	3,083

4	Առկա փայտե դռան քանդում 1հատ	մ^2	2	0,98	1,960
5	Առկա միջնորմի քանդում	մ^2	9,9	0,678	6,712
6	Պատուհանի քանդում	մ^2	1,725	1,503	2,593
7	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	մ^3	1,5	4,372	6,558
	Վերանորոգման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Շլաքաբետոնե միջնորմի կառուցում 0,1մ հաստության	մ^2	26	2,621	68,146
2	Պատերի սվաղում բարձրորակ ցեմենտավազային շաղախով h=2800մմ	մ^2	93,7	2,108	197,520
3	Պատերի երեսապատում հախճասալերով h=2800մմ ամրացված համապատասխան սոսնձով	մ^2	93,7	6,507	609,706
4	Պլաստիկե կախովի առաստաղի հավաքում	մ^2	18,8	2,704	50,835
5	Մետաղապլաստե դռների տեղադրում 700x2,1(h) 5հատ՝ սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	մ^2	7,35	29,029	213,363
6	Մետաղապլաստե պատուհանի տեղադրում 1150x150մմ (h) 1հատ՝ սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող	մ^2	0,1725	31,696	5,468
7	Պլաստիկ պատուհանագոգերի արժեքը b= 0,4մ	մ	1,3	3,519	4,575
	Հիմնական աստիճանավանդակ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	104,9	1,53	160,497
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	63	1,75	110,25
	2-րդ մասնաշենք՝ 3-րդ հարկ Քանդման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Հախճասալերով հատակի քանդում	մ^2	18,8	0,357	6,712
2	Ցեմենտավազային շաղախից հատակի նախապատրաստական շերտի քանդում	մ^2	18,8	0,348	6,542
3	Հախճասալի քանդում	մ^2	45,1	0,348	15,695
4	Ցեմենտավազե նախապատրաստական շերտի քանդում հախճասալերի տակ	մ^2	45,1	0,669	30,172

5	Կախովի առաստաղի քանդում	մ^2	18,8	0,164	3,083
6	Առկա փայտե դռների քանդում 2հատ	մ^2	4	0,98	3,920
7	Առկա մետաղապլաստե դռների քանդում 4հատ	մ^2	8	0,98	7,840
8	Առկա միջնորմի քանդում	մ^2	35,2	0,678	23,866
9	Միջանցքներում գրանիտե սալերով հատակի քանդում	մ^2	22,7	0,357	8,104
10	Միջանցքներում մանրահատակի քանդում	մ^2	68,7	0,449	30,846
11	Լսարաններում մանրահատակի քանդում	մ^2	85,8	0,449	38,524
12	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	մ^3	4	4,372	17,488
	Վերանորոգման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Շլաքաբետոնե միջնորմի կառուցում 0,1մ հաստության	մ^2	27,5	2,621	72,078
2	Պատերի սվաղում բարձրորակ ցեմենտավազային շաղախով h=2800մմ	մ^2	95,7	2,108	201,736
3	Պատերի երեսապատում հախճասալերով h=2800մմ ամրացված համապատասխան սոսնձով	մ^2	95,7	6,507	622,720
4	Պլաստիկե կախովի առաստաղի հավաքում	մ^2	18,8	2,704	50,835
5	Մետաղապլաստե դռների տեղադրում 700x2,1(h) 5հատ՝ սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	մ^2	7,35	29,029	213,363
	Միջանցքներ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	215,9	1,53	330,327
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	91,4	1,75	159,95
	Լսարաններ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	181,5	1,53	277,695
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	85,8	1,75	150,15
	Հիմնական աստիճանավանդակ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	104,9	1,53	160,497

2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	63	1,75	110,250
	2-րդ մասնաշենք՝ 4-րդ հարկ Քանդման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Հախճասալերով հատակի քանդում	մ^2	4,1	0,357	1,464
2	Ցեմենտավազային շաղախից հատակի նախապատրաստական շերտի քանդում	մ^2	4,1	0,348	1,427
3	Լամինատե հատակի քանդում	մ^2	16,1	0,119	1,916
4	Հախճասալի քանդում	մ^2	12,1	0,348	4,211
5	Ցեմենտավազե նախապատրաստական շերտի քանդում հախճասալերի տակ	մ^2	12,1	0,669	8,095
6	Լամինատե պատերի քանդում	մ^2	47,1	0,366	17,239
7	Կախովի առաստաղի քանդում	մ^2	20,1	0,164	3,296
8	Առկա փայտե դռների քանդում 2հատ	մ^2	4	0,98	3,920
9	Առկա մետաղապլաստե դռների քանդում 4հատ	մ^2	8	0,98	7,840
10	Առկա միջնորմի քանդում	մ^2	15,3	0,678	10,373
11	Միջանցքներում գրանիտե սալերով հատակի քանդում	մ^2	22,7	0,357	8,104
12	Միջանցքներում մանրահատակի քանդում	մ^2	68,7	0,449	30,846
13	Շին.աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	մ^3	2	4,372	8,744
	Վերանորոգման աշխատանքներ Սան.հանգույց				
1	Շլաքաբետոնե միջնորմի կառուցում 0,1մ հաստության	մ^2	37,5	2,621	98,288
2	Պատերի սվաղում բարձրորակ ցեմենտավազային շաղախով h=2800մմ	մ^2	120,8	2,108	254,646
3	Պատերի երեսապատում հախճասալերով h=2800մմ ամրացված համապատասխան սոսնձով	մ^2	120,8	6,407	773,966
4	Պլաստիկե կախովի առաստաղի հավաքում	մ^2	20,1	2,704	54,350
5	Մետաղապլաստե դռների տեղադրում 700x2,1(h) 6հատ՝ սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	մ^2	8,82	29,029	256,036
6	Պատերի սվաղում գաջե շաղախով	մ^2	15	2,548	38,220
	Միջանցքներ				

1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	266,1	1,53	407,133
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	90,6	1,75	158,55
	Լսարաններ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	102,6	1,53	156,978
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	41,7	1,75	72,975
	Հիմնական աստիճանավանդակ				
1	Պատերի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	124	1,53	189,72
2	Առաստաղի հարդարում լատեքսային ներկով, ծեփամածիկի հարթեցնող շերտի վրա	մ^2	48,8	1,75	85,4
	Հատակներ				
1	Ցեմենտավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության	մ^2	335,4	1,121	375,983
2	Կեռամիկական սալիկներով հատակների իրականացում ամրացված համապատասխան սոսնձով	մ^2	66,8	6,178	412,690
3	Մամլոգրանիտե սալիկներով հատակների իրականացում , ամրացված համապատասխան սոսնձով	մ^2	268,6	9,202	2471,657
	Ընդամենը 1-2 մասի				
	1-3. Մյուս մասնաշենքերում տանիքի ծածկի փոխարինում				
1	Տանիքի ցինկապատ թիթեղի ապամոնտաժում	մ^2	460,56	0,091	41,911
2	Տանիքի ծալքաթիթեղ d=0,55մմ հաստության	մ^2	460,56	3,776	1739,075
	Ընդամենը 1-3 մասի				
	1-4. Կենցաղային կոյուղի և ջրամատակարարում (1-ին և 2-րդ մասնաշենքեր) և 2-րդ մասնաշենքի սան.հանգույցի օդափոխություն				
	ապամոնտաժման աշխատանքներ				
1	Թուջե խողովակների ապամոնտաժում Φ100	մ	23	0,696	16,008
2	Թուջե խողովակների ապամոնտաժում Φ50	մ	20	0,696	13,92
3	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ15-Φ25	մ	47	0,302	14,194

4	Կերամիկական լվացարանների ապամոնտաժում սիֆոնով և ծորակով	հատ	5	0,403	2,015
5	Թուջե արտաքնոցի թասի ապամոնտաժում	հատ	8	0,403	3,224
6	Թուջե արտաքնոցի թասի լվացման տակառիկի ապամոնտաժում	հատ	8	0,403	3,224
7	Թուջե հոսակների ապամոնտաժում Φ50	հատ	2	0,201	0,402
	Կենցաղային կոյուղի				
1	Պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներ de110, փորձարկումով	մ	27	2,429	65,583
2	Նույնը՝ de50	մ	23	1,411	32,453
3	Կեռամիկական լվացարանի տեղադրում	հատ	9	13,41	120,69
4	Կեռամիկական զուգարանակոնքի տեղադրում «Կոմպակտ»	հատ	12	23,502	282,024
5	Կերամիկական միզամանի տեղադրում	հատ	2	14,858	29,716
6	Հոսակ d=50մմ	հատ	1	1,622	1,622
7	Սիֆոնի տեղադրում	հատ	9	2,172	19,548
8	Ձևավոր մասեր de110	հատ	34	4,225	143,65
9	Ձևավոր մասեր de50	հատ	23	2,667	61,341
10	Անցում de50-de100	հատ	1	3,18	3,18
11	Ստուգիչ - մաքրիչ	հատ	2	6,297	12,594
12	Մաքրիչ Φ100	հատ	4	6,297	25,188
13	Մաքրիչ Φ50	հատ	1	3,703	3,703
14	Միացում գործող ցանցին	տեղ	3	16,618	49,854
15	Անցքի բացում ծածկերում Φ150	տեղ	3	0,76	2,28
	ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենե խողովակ d=32x3 փորձարկումով, աղտահանումով, լվացումով, մոնտաժումով ձևավոր մասերի հետ միասին	մ	16	2,4	38,4
2	Պոլիպրոպիլենե խողովակ d=25x2,3 փորձարկումով, աղտահանումով, լվացումով, մոնտաժումով ձևավոր մասերի հետ միասին	մ	9	2,154	19,386
3	Պոլիպրոպիլենե խողովակ d=20x1,9 փորձարկումով, աղտահանումով, լվացումով, մոնտաժումով ձևավոր մասերի հետ միասին	մ	33	2,199	72,567
4	Փական d=20մմ	հատ	4	3,565	14,26
5	Փական d=15մմ	հատ	15	3,345	50,175
6	Լվացարանի ջրընդունիչ ծորակ	հատ	9	3,886	34,974
7	Ճկափող Φ15 , L=0.4մ	հատ	12	1,558	18,696
8	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր ֆիտինգներ Φ20	հատ	65	0,109	7,085
	2-րդ մասնաշենքի սան.հանգույցի օդափոխություն				
1	Խողովակ Φ100	մ	5	2,328	11,64

2	Օդամղիչ կենցաղային Φ100 250Կվտ	հատ	1	14,929	14,929
	Ընդամենը 1-4 մասի				
	1-5. էլեկտրական լուսավորություն				
1	Անջատիչ մեկստեղանի	հատ	21	1,072	22,512
2	Անջատիչ երկստեղանի	հատ	1	1,107	1,107
3	Անջատիչ ռեվերս երկու տեղից	հատ	3	1,759	5,277
4	էլ. խրոցակ, հողանցման կոնտակտով, 6Ա հոսանքի համար	հատ	4	1,494	5,976
5	Լուսակալ առաստաղի, էներգախնայող լամպով 1x12վտ հզորությամբ	լ-կ	16	4,63	74,08
6	Լուսակալ պատի, էներգախնայող լամպով 1x12վտ հզորությամբ	լ-կ	11	5,766	63,426
7	էներգախնայող կոմպակտ լամպ 12վտ հզորությամբ	լ-կ	27	0,861	23,247
8	ՊՎ մակնիշի պղնձե հաղորդալար, հատվածքը 1x2,5մմ^2	մ	750	0,32	240
9	PVC խողովակ Φ20մմ արտաքին տրամագծով	մ	250	0,156	39
10	Ավտոմատ միաֆազ անջատիչ 16Ա հոսանքի համար	հատ	11	0,724	7,964
11	Y3O տիպի պաշտպանիչ անջատման սարք 30Ա հոսանքի համար	հատ	11	17,956	197,516
12	Y994M տիպի տուփ	հատ	27	0,128	3,456
13	Y994M տիպի տուփ	հատ	31	0,128	3,968
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Լուսատուի ապամոնտաժում լամպով	լ-կ	16	0,889	14,224
	Ընդամենը 1-5 մասի				
	Ամբողջը				16500,00
	ԱԱՀ - 20 %				3300,00
	Ամբողջը				19800,00

* Կապալառուն աշխատանքները կատարում է Ք. Երևան, Իսահակյան 36 և Ջրաշատ 1 հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«18» հուլիսի 2017թ. կնքված
«ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07» *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքների» կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքներ»	Պայմանագրի կնքման օրը	11.09.2017թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«18» հուլիսի 2017թ. կնքված
«ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45000000	«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքներ»									19800 000				**19800 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 06>> Սեպտեմբերի 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
« Մարտշին » ՍՊԸ	*«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ*
ՀՎՀՀ 01534233	*ՀՎՀՀ 01505555*
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ Մաշտոց մ/ճ	*ք. Երևան, Իսահակյան 36*
Հ/Հ 16043022733200	*Անելիք բանկ» Տիգրան Մեծ մ/ճ*
Հասցե ք. Երևան, Նորք 2-րդ նրբ.17	*Հ/Հ 11815000774800*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«06» « Սեպտեմբերի» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» «հուլիսի» 2017թ.
Պայմանագրի համարը՝ ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07
Պատվիրատուն՝ի դեմս «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ -ի ռեկտոր Ա. Իսաբեկյանի և Պայմանագրի կողմը՝ի դեմս Մարտշին ՍՊԸ-ի տնօրեն Մ.Հարությունյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «01» «09» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքներ	Քանդման աշխատանքներ, Ներքին հարդարման աշխատանքներ , էլեկտրալուսավորություն աշխատանքներ	1	1	18.07.2017թ.- 11.09.2017թ.	18.07.2017թ.- 06.09.2017թ.	7727,954	3-եռամսյակ 2017թ,

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
Մ. Հարությունյան	Ա. Իսաբեկյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4
<< 27>> Սեպտեմբերի 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
« Մարտշին » ՍՊԸ

ՀՎՀՀ 01534233
«ՎՏԲ- Հայաստան Բանկ» ՓԲԸ Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043022733200

Հասցե ք. Երևան, Նորք 2-րդ նրբ.17

Պատվիրատու
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա»
հիմնադրամ

ՀՎՀՀ 01505555
ք. Երևան, Իսահակյան 36
Ամերիա բանկ» Տիգրան Մեծ մ/ճ

Հ/Հ 11815000774800

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«27» « Սեպտեմբերի» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «18» «հուլիսի» 2017թ.
Պայմանագրի համարը՝ ԵԳՊԱ-ԳՀԱՇՁԲ-17/07
Պատվիրատուն՝ի դեմս «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ -ի ռեկտոր Ա. Իսաբեկյանի և Պայմանագրի կողմը՝ի դեմս Մարտշին ՍՊԸ-ի տնօրեն Մ.Հարությունյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «10» «09» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	«Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի 1-ին և 2-րդ մասնաշենքերի մասնակի նորոգման աշխատանքներ	Քանդման աշխատանքներ, Ներքին հարդարման աշխատանքներ , էլեկտրալուսավորություն աշխատանքներ	1	1	18.07.2017թ.-11.09.2017թ.	18.07.2017թ.-11.09.2017թ.	11487.719	3-եռամսյակ 2017թ,

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Մ. Հարությունյան

Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

Ա. Իսաբեկյան

Կ.Տ.